Տեր ՌԱՖԱՑԵԼ Արքեպս. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՈՎՎԱԿԱՆ ԹՈՒՂԹ

«...Արդ, ինչ որ Աստված միացրեց,
մարդը թող չբաժանի» (Մատթ. 19.6)

ԸՆՏԱՆԻՔ

Գյումրի
Հայ Կաթողիկե Առաջնորդարան
2014

Գերաշ. Տեր ՌԱՖԱՅԵԼ Արբեպս. ՄԻՆԱՍՅԱՆ
Տիտղոսավոր Արբեպս. Կապադովկյան Կեսարիայի Հայոց
Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի և
Արևելյան Եվրոպայի Կաթողիկե Հայոց

ԹՈՒՂԹ ՀՈՎՎԱԿԱՆ

ԸՆՏԱՆԻՔ

Գյումրի
Հայ Կաթողիկե Առաջնորդարան
2014

Տեր ՌԱՖԱՅԵԼ Արքեպս. ՄԻՆԱՍՅԱՆ

Նույն հեղինակի կողմից՝

2012 Հովվական նամակ
2013 Թուղթ հովվական «Հավատք և Ավետարանացում»
2014 Թուղթ հովվական «Ընտանիք»
Թարգմանություն՝ „Семья", "Family"

Շապիկի նկարը՝ «Սուրբ Ընտանիք», պատկերված հայ անվանի նկարիչ Յուրոզի կողմից:

Նկարը նվիրվել է Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ Սրբազան Քահանայապետին 2009 թ.-ին Բրեշիա քաղաքում՝ Պոտտիչինո Սերա կատարված Հովվապետական այցի ժամանակ:

Ներածություն

2013-ը առանձնահատուկ տարի էր, որ առիթ տվեց մեզ խորացնելու և ապրելու մեր քրիստոնեական հավատքը: Առիթից օգտվելով խորին շնորհակալություն եմ հայտնում մեր Եկեղեցու հոգևոր դասին՝ Ծայրագույն վարդապետներին, վարդապետներին, երեց քահանաներին, քահանաներին, սարկավագներին, հոգևոր քույրերին, նվիրյալ հոգիներին և համայն հավատացյալ ժողովրդին, ովքեր նվիրեցին իրենց անձը, բարի կամքը և ժամանակը՝ վկայելու մեր քրիստոնեական հավատը, ի հայտ բերելու համագործակցությամբ և նվիրումով, բարի օրինակով ու զոհողությամբ, Հավատքի խոր ապրումով:

Մի ամբողջ տարի կենտրոնացանք «Հավատք»-ի բացառիկ շնորհի վրա, խնդրեցինք Ս. Հոգու լույսը, աղոթեցինք միասին, քարոզեցինք և վկայեցինք մեր հավատքն առօրյա կյանքով:

Սակայն, տարին բոլորելով, փակեցի՞նք արդյոք մեր հավատքի էջը, թե՞ նորոգեցինք ու շարունակում ենք հավատալ՝ արժանանալու համար այն երանությանը, որ Հիսուսն Իր հրաշափառ Հարությունից հետո Ս. Թովմասին ասաց. «Որովհետև դու ինձ տեսար, հավատացիր, երանի՛ նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան» (Հովհ. 20.29): Այո՛, երանության պիտի արժանանանք, եթե շարունակենք ապրել մեր քրիստոնեական հավատքը:

Այս բնաբանի վրա հիմնված՝ գալիս եմ ևս մեկ անգամ հովվական այս թղթով հրավիրելու Ձեզ, հո՛ւյժ սիրելի հոգևոր դաս և հավատացյալ ժողովուրդ, 2014-ի նոր տարին ապրելու ԸՆՏԱՆԻՔԻ հետ:

Մենք էլ Ընդհանրական Ս. Եկեղեցու հետ միասին 2014 տարին նվիրում ենք ընտանիքին, որ կարիք ունի ավետարանացման, վերատեսության և վերականգնումի նվիրյալ աշխատանքի:

Հիշատակության արժանի է 1994 թվականին գրված Հովհաննես Պողոս Բ Քահանայապետի հովվական թուղթը՝ նվիրված ընտանիքին: Այդ տարին ընտանիքին էր նվիրվել Միացյալ Ազգերի գրասենյակի նախաձեռնությամբ: Վերոհիշյալ թղթի մեջ Սրբազան Քահանայապետը գովաբանում է Միացյալ Ազգերի կազմակերպությանը նման նախաձեռնության համար՝ մատնանշելով, որ ընտանիքը գերազանց առիթ է աշխարհիս ազգերի և պետությունների համար, նրան անդրադառնալը և արժեքավորելը ներկա հասարակության մեջ կարևորագույն խնդիրներից է: «Եկեղեցին էլ իր հերթին,- ասում է Սրբազան Քահանայապետը,- այս վսեմ շարժման մաս է կազմում, քանի որ Եկեղեցու նկարագիրը և կոչումն է Քրիստոսից իրեն տրված հատուկ առաքելությամբ գնալու «բոլոր ազգերի» հետևից (Մատթ. 28.19): Սակայն,- շարունակում է Հովհաննես Պողոս Բ-ն,- ուզում եմ այս թուղթս ուղղել ընտանիքին, ոչ վերացական հաստատությանը, այլ իրականին՝ աշխարհի որ մեկ կողմն էլ որ այն գտնվի՝ անկախ ազգային կամ մշակութային պատկանելիության:

Ուզում եմ, որ այս պատգամս հասնի ամեն մի ընտանիքին, որ կենսական կորիզն է տիեզերական մարդկային մեծ ընտանիքի[1]»:

Ինչպես անցյալում ընտանիքի մասին աշխատանք է կատարվել համաշխարհային մակարդակով, այս տարի էլ Աստծո կամքով ուզում եմ հովվական թղթով Ձեր հետ միասին կիսել նախ Եկեղեցու մտահոգությունները, որի համար Եպիսկոպոսական արտահերթ Սինոդի ընթացքում պիտի ուսումնասիրվի հասարակական կյանքի բոլոր դժվարությունները և պայքարները, որոնք սպառնում են ընտանիքին: Ուզում եմ Ձեզ հետ միասին կիսել մեր թեմի ընտանիքի գոյավիճակը: Անձնապես, իբրև հովիվ, ուզում եմ կիսել Ձեզ հետ իմ խորհրդածությունները, մտահոգությունները և հարազատ ու անկեղծ փափագները հայ ընտանիքի առողջ առաջադիմության և հաջողությունների համար: Ուզում եմ Ձեզ հետ միասին ապրել ընտանեկան կյանքը՝ հարուստ իր նոր շնչով, մարդկային ու գերբնական շնորհներով: Ուզում եմ Ձեզ հետ միասին աղոթել հայ ընտանիքի վերականգնման համար՝ աշխատելով Ձեզ հետ վերծանել մեր հայ ընտանիքի կարգախոսները, վերակենդանացնել ու զարգացնել բարոյական արժեքները՝ սլանալու համար դեպի աստվածային վեհ բարձունքներ: Մինչ աշխարհն իր քայքայիչ և քանդիչ աշխատանքներն է

1 Քահանայապետի ուղերձը «Մարդու իրավունքների» հաստատման հիսնամյակի առթիվ Միացյալ Ազգերի սրահում: «Մարդու իրավունքները» հաստատվել են 1948թ.-ին, Միացյալ Ազգերի կազմակերպության կողմից: Ավա՛ղ, հետագայում շատ երկրներ դավաճանեցին իրենց տված հայտարարությունը և աշխատեցին քանդել նրա կորիզը՝ Ընտանիքը, մեջբերելով ընտանեկան հաստատության անապահովությունը:

տանում ընտանիքի դեմ՝ այն ենթարկելով ազատության խաբուսիկ պատկերներով, կեղծ անձնական իրավաբանական բացատրություններով ու անբարոյականությունը մեկնաբանելով որպես անհատի ազատության ինքնորոշման բնական երևույթ: Լոկ համատեղ կենակցությունը փոխարինում է ամուսնությանը, վիժումը խրախուսվում է կյանքի պահպանության փոխարեն, միասեռականությունը նկատվում է իբրև անհատի ազատության գերագույն արտահայտություն: Մենք՝ Հայ ազգի մաքուր ցեղի զավակներս, Քրիստոնյա հավատացյալ ազգի վերապրողներս և, վերջապես, Քրիստոսի Ս. Եկեղեցուն հարած հավատարիմներս, պիտի աշխատենք լրջորեն մոտենալ ընտանիքի մաքուր ըմբռնմանը և կառուցմանը: Նախ Աստվածաշնչյան իմաստով տեսնենք Աստծո ստեղծագործության վեցերորդ օրվա հրաշքը, երբ ստեղծում է մարդուն. «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Գիրք Ծնն. 1.27), հետո քննենք ստեղծագործության պատմությունը, այն նախադասությունը, ուր կրկնություններով Աստված հայտնում է մարդ էակի ստեղծագործության բացառիկ կարևորությունն ու հատուկ կոչումը, և ապա մեր առօրյա կյանքում ընտանիքը, նրա հասարակական, բարոյական և իրավական հարցերը, իրավունքները և պարտականությունները:

Այս թղթով ուզում եմ որդեգրել Բեթղեհեմի «Ս. Ընտանիքը» որպես տիպար օրինակ՝ խոնարհ, հնազանդ, անդորր, միացած և միախոհ, պարզության մեջ

երջանիկ, միասնորեն կատարող և ապրող իրենց ընտանեկան և հասարակական պարտականությունները:

Ս. Ավետարանի մեջ կարդում ենք, թե Ս. Հովսեփը, վստահելով Աստծո կամքին, իր խոստացյալ կնոջն ինչպես է իր մոտ առնում հրեշտակի տեսիլքից հետո, ինչպես է Մարիամը ավետման օրը վստահում ու հնազանդվում Աստծո կամքին (Մատթ. 1.20-25), ու երկուսը միասին բայլում են Բեթղեհեմ՝ կատարելու աստվածային ծրագիրը:

«Ս. Ընտանիքին» ընդօրինակելով՝ մեկնաբանել մեր մարդկային այժմյան ընտանիքի հատուկ իրավունքները, պարտականությունները և մանավանդ աստվածատուր բարոյական արժեքները, և մեզանից խնդրվում է հավատարիմ մնալ այդ արժեքներին, որ Ս. Ընտանիքը հիմնեց: Պետք է աշխատենք վերականգնել մեր ընտանիքը, եթե սասանված է, զարգացնենք այն, եթե գիտակից է իր հատուկ կոչմանը: Պիտի մեծարենք ու բարի օրինակի առարկա դարձնենք հայ ընտանիքը մեր հասարակության համար՝ ընդունելով այն որպես քրիստոնեական ճշմարիտ հավատքի և կյանքի վկայություն: Մեկ խոսքով, այս հովվական թուղթս բարերար աշխատանոց պիտի դարձնենք՝ նախ անձը կերտելու համար, ապա մեր ճշմարիտ անհատական կոչումն իմանալու և, այն ընտանիքի ոլորտի մեջ զետեղելով, ապրելու Աստծո հովանու ներքո:

Խրատ հոգևոր դասին

«Այս եմ ձեզ պատվիրում,
որ սիրեք միմյանց» (Հովհ. 15.17)

Այս բոլոր տեսությունները կմնան ամուլ, եթե մենք՝ հոգևորականներս, իմանալով ճշմարտությունը, չաշխատենք ամրապնդել դրանք մեր բարոզությամբ և առաջնորդությամբ:

Եպիսկոպոսական օծումը, լինելով լրումը քահանայության, եպիսկոպոսի ուսերին դնում է պատասխանատվություն՝ ուսուցանելու, սրբացնելու և կառավարելու իրեն հանձնված Եկեղեցին (Կաթողիկե Եկեղեցու Քրիստոնեական վարդապետություն): Սակայն եպիսկոպոսն այս բոլոր պարտականությունները կարող է ստանձնել և ի կատար ածել միայն ու միայն քահանայական դասի հետ անմիջական համագործակցությամբ: Քահանայական դասը, իր հատուկ կոչումով, նույն պատասխանատվությունն ունի, եպիսկոպոսի հետ հաղորդության մեջ լինելով, իրագործել այս սրբազան առաքելությունը:

Այս եռանդով մղված՝ ամենայն պարզությամբ պիտի խնդրեմ Ձեզանից, հո՛ւյժ սիրելի հոգևոր դաս, քույրեր և եղբայրներ, որ այս տարին դուք էլ ինձ հետ միասին նվիրեք մեր հայ ընտանիքի ծառայությանն՝ ի սպաս նրա լավագույն ապագայի: Աշխատենք միասին ամրապնդել մեր հայ ընտանիքն Աստծո շնորհիվ, միացած պահենք ամուսնական անքակտելի կապով, գոտեպնդենք այն առատահոս սիրով, անենք ամեն անհրաժեշտը, որ ամենաբարի Աստված օրհնի, սրբացնի և պահպանի ընտանիքը:

Արդ, մենք՝ հոգևորականներս, նկատվում ենք իբրև երկրի «Աղ», քանի որ հոգևորականի մեր հատուկ կոչումով կանչված ենք վկայելու հայ ընտանիքը, մեր բարի օրինակով և բարի խրատներով՝ մշտապես ունենալով Ս. Ավետարանը՝ որպես առաջնորդ, և «Սուրբ Ընտանիքը»՝ որպես տիպար օրինակ: Ընդհանրական Սուրբ Եկեղեցու քրիստոնեականի մեջ քահանայությունը նկատվում է իբրև Եկեղեցու յոթ Ս. Խորհուրդներից մեկը, և մենք Եկեղեցու հիմնական անդամներն ենք՝ մեր խոնարհ ծառայությամբ ի սպաս Աստծո: Այս պատճառով է, որ Հիսուսի տված աղի օրինակը հիշեցի: Սակայն նկատի պիտի առնենք նաև նույն խոսքի երկրորդ մասը. «Աղը լավ բան է, բայց եթե աղն էլ անհամանա, ինչո՞վ այն պիտի համեմվի» (Ղուկ. 14.34-35): Հիշենք նաև Քրիստոսի խոսքերն իր աշակերտներին, պարտականությունները, որ դրեց նրանց վրա, և կարողությունները, որ շնորհեց՝ քարոզելու Աստծո անունն աշխարհիս չորս ծայրերում: Այսօր մեզ՝ հոգևորականներիս է տրված նույն այդ պարտականությունները և առատաբուխ շնորհները՝ շարունակելու ի կատար ածել Քրիստոսի պատգամը: Այս տարի հատուկ կերպով Ձեզանից և ինձանից խնդրվում է հատուկ ուշադրություն դարձնել մեզ հանձնված ընտանիքներին: Մեզանից խնդրվում է հոգատար խնամք տանել՝ ի հայտ բերելու ընտանիքի ճշմարիտ կոչումը, որ արտահայտվում է ամուսնության մեջ՝ Ս. Պսակի Խորհրդով: Սակայն վերոհիշյալ կետերն իրականացնելու համար նախ հիշենք Քրիստոսի սիրո պատվիրանը, որ տվեց իր

առաքյալներին, և այն ավանդվեց մեզ. «Այս է իմ պատվիրանը, որ սիրեք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի» (Հովհ. 15.12):

Արդարև, մեր քահանայական կոչումով չի կարելի ապրել այս պատվիրանից դուրս և արժանանալ Քրիստոսի առաքյալ կոչվելու մեծ պատվին: Չի կարելի վկայել Քրիստոսը, եթե Նրա պատվիրանը չպահենք ու այն իրավամբ և ճշմարտապես չապրենք: Չի կարելի քարոզել սերը, որ էական, ուրույն հիմքն է ընտանեկան կյանքի, եթե մենք զուրկ ենք դրանից: Սիրո պատվիրանն այնքա՜ն մոտ էր Հիսուսի սրտին, որի համար կրկին ու կրկին պատվիրեց առաքյալներին՝ ասելով. «Այս եմ ձեզ պատվիրում, որ սիրե՛ք միմյանց» (Հովհ. 15.17): Արդ ինչպե՞ս պիտի արժանանանք Քրիստոսին ծառայելու նվիրական պատվին, եթե չհասունացնենք սիրո սերմը մեր սրտի մեջ: Ինչպե՞ս պիտի գործենք ու նվիրենք մենք մեզ հայ ընտանիքի սրբությանը և հաջողությանը, եթե իբրև քահանա կամ հոգևորական մեր սրտերում չունենք հարկ եղած սիրո հումքը:

Ուստի, սիրելի՛ եղբայրներ և քույրեր ի Քրիստոս, խոնարհությամբ և բարի տրամադրություններով դիմում եմ ձեզ, որ 2014-ը ամբողջությամբ տրամադրենք մեր անձնական խղճի քննությանը և ազնվությամբ վճռենք նորոգվել՝ խնդրելով Աստծո Հոր և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի և շնորհատու Սուրբ Հոգու օրհնությունն ու շնորհքը, տոգորվենք և ճառագենք աստվածային սիրով՝ վասն հայ ազգի զավակների ծառայության:

Ուստի, մեր մեջ ունենանք Հիսուսի պատկերը՝ որպես Հովիվ: Հիշե՛նք, որ Նա մեզ փոխանցել է ոչ միայն տիտղոսները, առատ շնորհներն ու պարգևները, այլ նաև պարտականությունները: Հիշե՛նք այն հատվածը, ուր ասում է. «Ես եմ լավ Հովիվը, լավ Հովիվը իր կյանքն է տալիս իր ոչխարների համար... Ես եմ լավ Հովիվը. և ճանաչում եմ իմ ոչխարներին և ճանաչվում նրանցից» (Հովհ. 10.11-14):

Հետևաբար, մեր սրբազան առաքելությունն է գնալ մեր ոչխարների ետևից, հավաքել, պահպանել և առաջնորդել դեպի երանավետ հոգևոր մարգագետիններ: Մենք՝ իբրև այլ ոմն Քրիստոսներ, պիտի վկայենք կենդանի և կենդանարար Լույսին՝ Քրիստոսին, որ ասում է. «Ես եմ աշխարհի լույսը, ով իմ ետևից է գալիս, խավարի մեջ չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ. 8.12):

Ընտանիքի հատուկ կոչումը

«Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով. Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Գիրք Ծննդոց 1.27):

Նախաբանի մեջ հիշեցինք, որ «Ընտանիք» բառը և նրա էությունը հասկանալու համար հարկ է անպայման դիմել Ս. Գրքին: Արդ, առաջին կետով նշենք, որ Ս. Գիրքը Հին Կտակարանի մեջ ասում է. «Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ»» (Գիրք Ծնն. 1.26): Աստծո այս խոսքը, բնականաբար, աստվածային անհուն սիրո արտահայտություն է՝ ցանկանալ մարդ ստեղծել և առանձնաշնորհել ստեղծագործության բոլոր արարածներից վեր: Անտարակույս, վերոհիշյալ սուրբգրային արտահայտությունը լի է հատուկ նկարագրով և կարողությամբ, մանավանդ, երբ մարդը դառնում է երկնային դրախտի բնակիչը, Աստծո մոտ և՛ բարեկամ, և՛ տերը ամբողջ աստվածային ստեղծագործությանը՝ զրահված անկրկնելի իշխանությամբ՝ տիրելու երկնքի տակ և երկրի վրա գտնվող բոլոր թռչուններին, գազաններին և սողուններին: Ինչ աննկարագրելի և աներևակայելի պատիվ է ու բացառիկ կոչում:

Երկրորդ կետում նշմարում ենք Աստվածաշնչի՝ նույն Ծննդոց գրքի կենտրոնացումը մարդկային ստեղծագործության նկարագրի և կոչման վրա: Տեսնում ենք, թե ինչպես Հայր Աստված մարդուն պարգևում է «Աստվածանման էակ» լինելու մեծ պատիվը: Այս մեծ պատիվը դրսևորվում է հետևյալ բառերի մեջ. «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով

ստեղծեց նրան...» (Գիրք Ծնն. 1.27): Ստեղծագործության միակ տեղն է, ուր կրկնակի հիշատակությամբ հաստատվում է ստեղծվածի բնությունը և հատուկ կոչումը: Նույն պարագան մնացածների դեպքում. «Աստված ստեղծում է և տեսնելով, որ լավ է, օրհնում է ու անցնում հաջորդ բայլին»,- այսպես ենք կարդում Ծննդոց գրքում (Գիրք Ծնն., գլուխ 1՝ «Ստեղծագործության պատմությունը»): Միայն մարդու ստեղծագործությանն է Աստված առավելագույն կերպով մոտենում, մարդուն հատուկ շնորհքով է օրհնում, որովհետև ստեղծված է Իր նմանությամբ. «Աստված ասաց. մարդ ստեղծենք մեր կերպարանքով...» (Գիրք Ծնն. 1.26): Այո, այս բառերով է հաստատվում մարդու աստվածային նկարագիրը, հետևաբար և կոչումը, որով մարդը տարբերվում է մյուս արարածներից:

Երրորդ կետի մեջ հիանալի կերպով ժխտվում են այսօրվա մեր մարդկային հասարակության մեջ դարեր ի վեր պտտվող շշուկները, որոնք աշխատում են բանդել մարդկային էությունը և կառույցը:

Գիրք Ծննդոցի՝ մարդու ստեղծագործության էջի մեջ, նույն նախադասության ավարտին, հայտնվում է մարդու բնությունը «...արու և էգ ստեղծեց նրանց» (Գիրք Ծնն. 1.27): Այո, արու և էգ, և ոչ իրարանման անձեր և սեռեր: Այսօրվա աներևույթ ուժերը ջանում են մարդկային բնության պատկերի մտայնությունը փոխել, միասեռականությունը ընդունելով որպես բնական երևույթ և մարդկային բնության մաս, աղավաղել մարդկային բնության օրենքները: Այս երեք բացատրություններից հետո դեռ

ավելին կարող ենք բնել և բացատրել, սակայն գոհանանք՝ Արարչագործության ավարտին Աստծո արտասանած խոսքն իբրև ընտանիք կառույցի հիմնաքար առնելով: Այդ խոսքը պարզվում է այս բառերի մեջ. «...Աճեցեք և բազմացեք, լցրեք երկիրը և տիրեցեք դրան...» (Գիրք Ծնն. 1.28): Աստվածային օրհնությամբ պսակված մարդը պարտականություն է ստանում կազմելու ընտանիք, բազմանալու և տեր դառնալու իրեն տրված աշխարհին: Աստծո կողմից այս արտահայտությունը բավական է՝ ծնունդ տալու և հիմնելու ընտանեկան հաստատությունը: Ուստի առաջին ընտանիքը սկսվում է Ադամի ու Եվայի միջոցով, որ իրենց միությամբ պիտի բազմանային ու լցնեին երկիրն ու տիրեին դրան: Այո, նրանք մնացին մեկ մարմին. ինչպես Նոր Կտակարանում պատմվում է Մատթեոս ավետարանչի բերանով, որ փարիսեցիները, մոտենալով Քրիստոսին, Նրան փորձելու համար հարցրեցին. «Օրինավո՞ր է, որ մեկն իր կնոջն արձակի ամեն մի հանցանքի պատճառով». Հիսուս պատասխանեց նրանց երեք հաստատումներով. «Դուք չե՞ք կարդացել, թե նա, ով սկզբից ստեղծեց, արու և էգ արեց նրանց... ուրեմն՝ ոչ թե երկու, այլ մեկ մարմին են... Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. 19.3-6): Հետևաբար, Հիսուսը չհաստատեց միայն այն, ինչ որ սահմանված էր արարչագործությամբ, այլ մեկ շնորհք ևս տվեց՝ ամուսնական կյանքն ապրելու նոր արժանապատվությամբ՝ Պսակի Ս. Խորհրդի մեջ, որ պատկերավորվում է Փեսա Քրիստոսի և Հարս Եկեղեցու

միջև գոյացած սիրով: Ինչպես նկարագրում է Ս. Պողոսն եփեսացիներին ուղղված իր նամակում. «Այրեր, սիրեցեք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց իր եկեղեցին» (Եփես. 5.25): Ի՛նչ հրաշք, Քրիստոսը մեկ արտահայտությամբ վերահաստատեց արարչագործության Նպատակը, ընտանիքի Սրբությունը և աստվածային օրենքի Անլուծելիությունը:

Այսպիսով, Քրիստոսի խոսքերը, կրկնակի հաստատում և զգուշացում եղան բոլոր անհատներին, խմբերին, կազմակերպություններին և պետություններին, որ արարչագործությունն երկու սեռերի անհպելի իրականություն է, որի նպատակն է շարունակել Հայր Աստծո ծրագիրը:

Ուստի, «...ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մարկ. 10.9): Այսպիսով, անխախտելիորեն հիմնվում է ընտանիքը՝ որպես աստվածային սքանչելի խորհուրդ: Խորհուրդ, որի պարտականությունն է ընտանիքը պահել ու պաշտպանել հասարակական և բարոյական ախտերից: Ընդհանրական Եկեղեցու Քրիստոնեականն էլ իր հերթին է խնդրում պահել Պսակի Ս. Խորհուրդը, որ երկու ամուսինների՝ այր մարդու և կնոջ միջև է հաստատվում, որովհետև այն հիմնված է աստվածային օրենքների վրա՝ ի շահ զույգի ընդհանուր բարիքի և բարօրության, որդեծնության և զավակների դաստիարակության՝ պահելով Աստծո կամքը, որ է Ս. Պսակի անլուծելի խորհուրդը[1]: Աստված ստեղծեց Այր ու Կին և կոչ

1 (COMPENDIUMDU CATÉCHISMEDE L'ÉGLISE CATHOLIQUE CHAPITRE III LES SACRAMENTS AU SERVICE DE LA COMMUNION ET DE LA MISSION 1659-1660)

արեց նրանց միմյանց սիրելով ապրել ամուսնական Ս. Խորհրդի մեջ: Ինչպես տեսաք մեր աշխատության մեջ, Աստվածային ծրագիրը երկու ամուսինների համար է, որովհետև Աստված, սիրո աղբյուր լինելով, սիրո մեջ ստեղծեց մարդուն և սիրելու հրավիրեց, ուստի «այլևս երկու չեն, այլ մեկ մարմին» (Մատթ. 19.6) և «Աստված օրհնեց նրանց ու ասաց. Աճեցեք ու բազմացեք...» (Գիրք Ծնն. 1.28): Անտարակույս անխուսափելի և անուրանալի է ընտանիքը և նրա կարևոր դերը մարդու կյանքում:

Եկեղեցու վարդապետության (ուսմունքի) տված վերոհիշյալ բացատրությունը այլ նպատակ չի հետապնդում, եթե ոչ նախապես հիշեցումը՝ ապահովելու ամուսնացյալ զույգի անդորրությունն ու երջանկությունը առողջ միջավայրում, զավակներ կրթելու և նոր սերունդ պատրաստելու ծրագիրը՝ աստվածաստեղծ ու աստվածանման մարդկային շառավիղը դարերի ընթացքում շարունակելու արարչագործությունը: Այսպիսով, ընտանիքը դառնում է մի բնական միջավայր՝ բնօրրան մանուկների և երիտասարդների առաքինության, ժուժկալության, ողջախոհության և եղբայրասիրության կազմավորման աշխատանքի համար: «Ընտանիքը տեղական եկեղեցի է, բարոյական դպրոց՝ հոգևոր հասունության, ուր ծնողները և զավակները փորձում և ապրում են վերոհիշյալ արժեքները»: «Մարդ էակը ծնվում է ընտանիքի մեջ և պարտական է նրան իր գոյության համար, հետևաբար կարելի չէ բաժանել կամ հեռացնել մարդուն իր բնից: Սակայն երբ մարդը ծնվում է ընտանիքից դուրս, նրա սրտում գոյա-

նում է անբավարարություն և ցավ, որոնք ծանրակշիռ են անհատի ամբողջ կյանքի ընթացքում»,- ասում է Երանելի Հովհաննես Պողոս Բ Քահանայապետը: Այսպիսիների պարագայում Եկեղեցին մոտ է կանգնում և սեր է սփռում նրանց կյանքում[2]:

Ընտանիքում պարտականությունները և իրավունքները համերաշխորեն բաժանվում են ընտանիքի անդամների միջև: Ծնողները՝ իրենց ծնողական վիճակի և հատուկ կոչումի համապատասխան, պարտականություն ունեն հսկելու իրենց զավակների հոգեբանական առողջ մթնոլորտը, բնական աճը և հասունությունը: Այն զավակները, որոնք աճում, զարգանում և հասունանում են քրիստոնեական օրինակելի ընտանիքի մեջ, ավելի հեշտությամբ են ապրում և փորձարկում բարոյական արժեքներն ու աստվածային սերը՝ ընդօրինակելով ծնողների տված բարի օրինակը[3]: Սերը միակ կրակն է, որ պահում է ընտանիքը մեկ օջախի մեջ միացած, հասուն, ամուր և պարզ: Պահում է ուժեղ՝ դիմագրավելու կյանքի դժվարություններին, հաղթահարելու փորձությունները և ճշմարտապես վկայելու քրիստոնեական ինքնությունը և պատկանելիությունը: Սուրբգրային հակիրճ ուսումնասիրությունից հետո անցնում ենք երկրորդ ոլորտին՝ ընդլայնված իմաստով ուսումնասիրելու ընտանիքի ըմբռնումը և հասկացողությունը՝ իր իրավաբանական և հասարակական սահմանումներով: Հիրավի, Աստված ստեղծեց ընտանիքը, սիրեց, սրբացրեց այն և ընտրեց որ-

2 (Gratissimam sane, Lettera alle famiglie Enchiridion della famiglia, p.284, n.898)
3 (Familiaris Consortio, 18, 63-64: n. 532ss; EV 7/1582s. 1716s.)

պես Իր Միածին Որդու Ծննդյան օրրան: Պատմական իրականություն է Նոր Կտակարանի մեջ, որ Քրիստոս վերահաստատեց ընտանիքը՝ իբրև աստվածային արարչագործության հրաշք: Իրականություն է նաև, որ խաչի վրայից Քրիստոսն Իր Մորը հոչակում է որպես համայն մարդկության Մայր՝ հանձին Ս. Հովհաննես առաքյալի. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին» (Հովհ. 19.26), և նույն Հովհաննես առաքյալի միջոցով համայն մարդկությանն է որդեգրվում աստվածային ընտանիքը. «Ահա քո մայրը» (Հովհ. 19.26),- ասում է Քրիստոսը:

Սակայն այս արժեքավոր երևույթներից դուրս հարկ է ընդունել նաև մարդկային հասարակության՝ դարերի ընթացքում կատարած անգնահատելի աշխատանքները, «Ընտանիքի» հանդեպ սահմանումները, գաղափարները, որ զարգանալով մեզ հասան իրենց բազմազան մեկնաբանություններով: Կարող ենք բազմաթիվ օրինակներ տեսնել բոլոր ժամանակների մեծերի մտքերում և գրվածքներում: «Ընտանիքը հասարակությունն է մանրակերտ ձևի մեջ, որի ամբողջականությունից է կախված ամբողջ մարդկային մեծ հասարակության անվտանգությունը»,- ասում է ամերիկացի մանկավարժ Ֆելիքս Ադլերը (1851-1933): Հետևաբար, մեզ համար կարևոր է հասկանալ, թե մենք ով ենք հասարակության մեջ և որոնք են մեր իրավունքներն ու պարտականությունները: Եվրոպական մշակույթի մեջ ընտանիք հասկացությունը բացատրվում է հետևյալ կերպ՝ «մի խումբ անհատներ՝ իրար հետ միացած օրինական կանոններով, ինչպես ամուսնությունը

և արյունակցական կապերը, ինչպես տոհմային հաջորդությունները»: Սակայն մի շարք մարդաբանների կարծիքները տարբերվում են: Նրանք հաստատում են, որ «արյունակցական կապերից բացի կան նաև տարբեր մշակույթով և հասկացությամբ հասարակություններ, որոնք ապրում են ընտանեկան ամբողջական իրականություն՝ արյունակցական կապերից դուրս»: Այս բոլոր հայտարարությունները մի կողմ և Մարդու իրավունքների 16-րդ կանոնի ընդհանրական հայտարարությունը մյուս կողմ, որովհետև այս վերջին նշված կանոնը հաստատում է հետևյալ երեք կետերը.

Ա. Այր մարդիկ և կանայք պատշաճ տարիքում իրավունք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու՝ առանց որևէ ցեղի, քաղաքացիական և կամ կրոնական խտրականության: Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնության մեջ, դրա ընթացքում և ամուսնալուծության պահին:

Բ. Ամուսնությունը կատարվում է միայն ու միայն երկու տարբեր սեռերի՝ ամուսինների ազատ և կատարյալ անկաշկանդ հավանությամբ:

Գ. Ընտանիքը հասարակության բնական և էական կորիզն է, ուստի իրավունք ունի պաշտպանվելու և՛ հասարակական, և՛ պետական իշխանությունների կողմից:

Զեմ ուզում զանազան երկրների և պետությունների օրենսդրությանն անդրադառնալ, քանի որ մարդու իրավունքների կանոնական 16-րդ հոդվածը որդեգրված է համաշխարհային իշխանությունների մեծա-

մասնության կողմից: Մեր փափագն է ավելի կենտրոնանալ ներկայիս հասարակության ընտանիքի և, մասնավորապես, հայ ընտանիքի նկարագրի պատկերացման վրա:

Ընտանիքի նկարագիրը և իր առաջնակարգ դերը հասարակական տեսանկյունից սերնդագործությունն է (որդեծնությունը), այսինքն՝ հասարակությունը բազմացնելու պարտականությունը: Այս պատճառով հասարակությունն ու ընտանիքը մնայուն և սերտ հարաբերության մեջ են և դարերի ընթացքում փոփոխությունների ենթարկվելով՝ հետևում են հասարակության և մշակույթի պահանջներին: Ընտանիքը հասարակության մեջ իշխող տարրն է, որ բացարձակ ձայն ունի՝ որոշումներ կայացնելու կենցաղային, իրավաբանական պահանջների իրականացման մեջ: Այս առավելությունները գործում են ի շահ զավակների ապահով ապագայի: Ընտանիքը, ըստ հասարակագետների գիտական վերջին ուսումնասիրությունների, ամուսինների զույգն է, որ հատուկ հասարակական հարաբերությունների մեջ է զավակների հետ: Նրանք մեծ դեր ունեն հասարակության մեջ և մեծ արժեք՝ հանրության համար: Վերոհիշյալ և շատ ուրիշ տվյալների հիման վրա ընտանիքը կարողացել է դիմադրել դարերի ընթացքում վատագույն ուժերին և դրանք հաղթահարելով՝ մնացել է հաստատ իր էական կարգախոսներում:

Այս առնչությամբ մի քանի ուսումնասիրողներ կան, որոնք մեծապես ազդել են ընտանիքի հոգեբանության և նրա հասարակական կարգավիճակի վրա: Առ օրինակ գերմանացի փիլիսոփա Ֆրիդրիխ Հեգելը (Հեգել՝ Գեորգ

Վիլհելմ Ֆրիդրիխ (1770-1831)), որ արտահայտվել է ընտանիքի մասին իր կատարած ուսումնասիրությունների մեջ. «ամուսնական կյանքում տեղի է ունենում առաջին մարդկային դասակարգային պայքարը», և այս գաղափարը որդեգրվել է դասականների բնարկումների մեջ: Անտարակույս, կարող ենք ընդունել այս գաղափարը և համաձայնվել փիլիսոփա Ֆրիդրիխ Հեգելի հետ, եթե հանգամանքային անհավասարություն ենք դնում երկու ամուսինների միջև: Արդարացի կլինի նաև հեղինակի ուսումնասիրությունը պատկերավոր կերպով, եթե մարդուն մերկացնենք իր հոգևոր և բարոյական արժեքներից և հեռացնենք նրան իր Արարչից, որ հավասար կերպով ստեղծեց երկու սեռից բաղկացած մարդուն՝ այր ու կին: Հիրավի, այն ժամանակ, երբ մարդը մոռանա իր ինքնությունը, կյանքի կոչումը, պատկանելիությունը, պայքարը, թյուրիմացությունը և բաժանումը, դառնալու են հասարակության մեջ բնական երևույթ, դաշտ՝ մարդկանց դասակարգերի բաժանելու համար: Այսինքն՝ վերոհիշյալ հեղինակն իրավունք կունենա ընտանիքը կարգելու իբրև դասակարգային պայքարի առաջին դաշտ: Ուրիշ հեղինակներ էլ կան, որոնցից Պիտեր Լազլեթը մեկ աշխատություն է կատարել ընտանիքի մասին, որի մեջ ընտանիքը բաժանում է հինգ դասակարգերի:

1. Ընդհանրապես ընդունված ամուսնությունը:
2. Կորիզային, այսինքն՝ ընտանիք, որ կազմված է մեկ ամուսնական միավորից:
3. Ընդարձակ ընտանիք, այսինքն՝ այն ընտանիքը, որ

մեկ միավորի ամուսնությամբ ընտանեկան կապ ունի մեկ այլի հետ, ինչը մենք կոչում ենք Տոհմային, կամ Նահապետական ընտանիք:

4. Բազմաթիվ, այսինքն՝ այն ընտանիքը, որ կազմված է մեկից ավելի ամուսնական կապերով:

5. Անկազմ կապերով ընտանիք, այսինքն՝ ապօրինի կենակցությամբ կազմված ընտանիք, որ մենք կոչում ենք «միայնակ մայր»:

Այս ուսումնասիրություններից դուրս հասարակագետների մոտ ուրիշ ԵՐԵՔ գլխավոր բաժանումներ էլ են առաջ բերվել՝ իրենց ենթաբաժանումներով, առավել՝ միասեռականությունը, որի պատասխանը գտնում ենք Գիրք Ծննդոցի մեջ, ուր հստակ սահմանումով Աստված ընտանիքը ստեղծեց երկու տարբեր սեռերով, և որին արդեն անդրադարձանք: Քանի որ այն մաս չի կազմում մեր ըմբռնմանը, հետևաբար, կարիքը չկա խորանալու դրա բնության մեջ: Մեր օրերի հասարակության մեջ Ընտանիքի ըմբռնումն ու սահմանումը լրիվ խաթարված է: Արևմուտքի՝ եվրոպական և ամերիկյան հասարակության մեջ Նահապետական սրբությունը կորսված, բանդված է: Սատանայական ուժեր կան, որոնք ձգտում են ընդհանրացնել մարդկային կյանքը «globalisme»-ի (գլոբալիզացիա կամ համաշխարհայնացում) հոգեբանությամբ՝ ջլատելու և մասնատելու ընտանիքի առողջ մտայնությունը: Այս ներկա պատկերն ինձ հիշեցնում է Աֆրիկայի նվաճումները, երբ սպիտակամորթները փոխում էին ադամանդը պսպղուն ապակիով: Տեղի բնա-

կիչներն անգիտանում էին՝ չհասկանալով իրական արժեքը և իրենց ունեցած ադամանդը սիրահոժար տալիս էին պապղուն ապակիների փոխարեն: Դարեր անցան, որ դատապարտվի այս անիրավությունը: Այսօր նույնը պատահում է ոչ սևամորթի և սպիտակամորթի միջև, այլ ամբողջ մարդկության կյանքի մեջ: Դրա համար մեր մոտեցումը ընտանիքին մնում է ավանդական՝ մեր ազգի որդեգրած և դարեր ի վեր պահված և փայփայված ընտանիքի կյանքը: Ընտանիքի ըմբռնումն ազգային, եկեղեցական և պետական սահմանադրության մեջ կա և մնում է համապատասխան Ս. Գրքի տված սահմանումին և նկարագրին, համապատասխան Քրիստոսի հաստատած ուսուցմանը և վարդապետությանը, որոնց մասին արդեն խոսեցինք: Մեր հայ ընտանիքը, ի հեռուկս բազմաթիվ ներքին հարցերի, հավատում է ընտանեկան սուրբ և աստվածային հիմնարկին: Կատարելագործելու համար մեր աշխատությունը արժի հիշել 356 թվականին կայացած Աշտիշատի երկրորդ ժողովը, որ գումարվել է Արշակ Բ թագավորի (350-368) օրոք՝ Ս. Ներսես Մեծ Ա Պարթև Հայրապետի (353-373) նախաձեռնությամբ: Ժողովի որոշմամբ բացվել են որբանոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ և աղքատանոցներ: Այսինքն՝ ի սկզբանե մեր եկեղեցականներն ու թագավորները մեծ հոգածություն են դրսևորել հայ ընտանիքի նկատմամբ: Ուստի բնական երևույթ է նաև մեր այսօրվա նվիրումն ընտանիքին և նրա մտահոգություններով զբաղվելը՝ լավագույնն իրականացնելու և այն ապրելու համար:

Ընտանիքի ճգնաժամերը

«...Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. 19.6):

Վերջերս մի ուսումնասիրություն է հրապարակվել, ուր մատնանշվում է 1970-2000 թվականներին ընտանիքի կամ ընտանեկան հաստատության արձանագրած իր արժեքների մեծ նահանջը (40-ից 5 տոկոսը): Ստույգ

ընտանիքն ունի այլազան հարցեր, հարցեր ներքին և արտաքին հարաբերություններում, ծնողները և զավակները, ամուսիններն իրար հետ, ընդլայնված իմաստով ընտանիքի պարագաները, ազգականները, մինչև իսկ անձնական, անհատական հոգեբանական հարցեր, որոնք ընտանեկան հավասարակշռության վրա ժխտական կերպով են ազդել: Անպատասխանատվության հոգին, անձնասիրությունը, ինքնահաճությունը, որոնք ծնողական պարտականությունների անգիտակցության արդյունք են, դարձյալ ծանր բեռ են ընտանիքի խաղաղ կյանքի համար: Բացի մարդկային արարածների միջև եղած փոխադարձ հարաբերություններից, կան նաև ընտանիքի ֆինանսական պայմանները, ելևէջները՝ հարստության և աղքատության, որոնք իրենց հերթին

ընտանիքը բեռնավորում են ժխտական դրություններով և առաջնորդում դեպի ատելություն և բաժանում: Պիտի զարմանայինք, եթե ընտանիքում հարցեր չլինեին, եթե նկարագրային բախումներ չպատահեին: Ընդհակառակը, այս հարցերը կյանքի նշաններ են, եթե պատահեն և հաղթահարվեն ընտանիքի անդամների բարի և հոգևոր տրամադրությամբ: Արդ, այս ծանր պատճառների համար են մեր նկատառումներն ու մտահոգությունները՝ լուծում գտնելու ընտանիքի հարցերին, ապահովելու նրա հավասարակշիռ և բնականոն աճը: Այս պարագայում մեր համոզումն է ընտանիքի կյանքում հուզել, արթնացնել բարոյական և հոգևոր արժեքներ: Այսպիսով, մեծ դրական արդյունքներ կարող ենք տալ այժմեական ընտանիքի գոյավիճակին:

Սերը

«Այս է իմ պատվերը, որ սիրեք միմյանց, ինչպես որ ես սիրեցի ձեզ» (Հովհ. 15.12):

Անտարակույս, առողջ ընտանիքի կազմավորման առաջին պայմանը Սերն է: Սիրով ենք ծնվում, սիրով են զույգերն ամուսնանում, սիրով ապրում և սիրով զավակներ բերում: Դժբախտաբար, ներկա իրականությունը ցույց է տալիս, որ սերը լքված է: Սերը շահագործված է: Սերը ստորագնահատված և բզկտված է անձնական շահերի համար: Սերը վերածվել է մոլորությունների և ապօրինի գործունեությունների գործիքի:

Ընտանիքը սիրո վրա է հիմնված, բայց ոչ վերոհիշյալ ժխտական մտայնության սիրով, որին հաճախ հանդիպում ենք մեր օրերում: Ընտանիքը ճշմարիտ սիրո հաստատություն է: Արդ, եթե սերը պակասի կամ ընդհանրապես բացակայի այս հաստատությունից, ինչո՞վ պիտի սնվի ընտանիքը: Ընտանեկան խնդիրների հիմնական պատճառը սիրո բացակայությունն է: Սիրո սահմանումը, դժբախտաբար, թերի է մնում մեր քրիստոնյա հասարակության մեջ և հաճախ տարբեր մեկնաբանություններ է ստանում նույնիսկ ընտանեկան շրջանակներից ներս: Խեղաթյուրված է սիրո էությունը, վաճառականացված ու կորսված է նրա վսեմությունը: Դրա համար մեր պարտականությունն է այն մաքրել, ուղղել և վերականգնել իր ճշմարիտ իմաստով: Ի՞նչ է սերը, որ այդքա՛ն էական է թվում ընտանեկան միասնության և հաջողության համար:

Շատ զույգերի համար սերը համախոհ և միասնական ընթացքով կյանքի ճանապարհն անցնելն է, փոխադարձ հարգանքը մեկը մյուսի նկատմամբ: Ուրիշների մոտ սերը զույգերից մեկի կամավոր ենթակայությունն է մյուսին, և գաղտնիք չէ, որ հայ հասարակության մեջ գերակշռում է կնոջ ենթակայությունն իր ամուսնուն: Ոմանք սերն անբացատրելի վիճակ են նկատում և զգացումի կամ զգացական արտահայտությունների հետ կապում, ուստի իրենց անկարող են համարում այն նկարագրել: Այս բոլորը ցույց են տալիս մեզ, թե որքա՛ն տկար հասկացողության զոհ է սերը: Այն կարիք ունի օգնության՝ ըմբռնելու նրա ճշմարիտ իմաստը և նրա լույսի ներքո հասկանալու ընտանիքի ճշմարիտ կոչումը: Արդ, իրական սերը վերոհիշյալ նկարագրություններից և ոչ մեկի մեջ չէ և ոչ իսկ սիրային հարաբերությունների մեջ է: Սիրո էությունը և իրականացումը զոհողության մեջ է կայանում: Զոհողություն, որ առանց պայմանի է, կատարյալ, ամբողջական, անսահման և իրականացվում է մնայուն տրամադրության մեջ: Նկարագրված այս սերը Քրիստոսի պատկերի մեջ

է առկայծում: Քրիստոսը մեզ փրկելու համար ի՜նչ սեր տվեց: Ս. Պողոսը փիլիպեցիներին ուղղված նամակում ասում է. «Զեզանից յուրաքանչյուրը թող խորհի այն, ինչ որ կա Քրիստոս Հիսուսի մեջ, որ Աստծո կերպարանքով էր... այլ իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով... հնազանդ լինելով մինչև մահ և այն էլ մահվան՝ խաչի վրա» (Փիլիպ. 2.5-9): Այս է ճշմարիտ սերը, որ պահանջվում է ամուսիններից: Այս է գաղտնիքը և բանալին, որ ապահովում է ընտանիքի երջանկությունը, նրա առողջ և հաջող ընթացքը: Զոհողություն և ամբողջական անձնվիրում մեկը մյուսին. այս է ճշմարիտ սերը, որ փափագում ենք վերականգնել մեր հայ ընտանիքի մեջ: Սերը խորապես հասկանալու համար կարող եք կարդալ Ս. Պողոսի՝ կորնթացիներին ուղղված առաջին նամակի 13-րդ գլուխը՝ «Օրհներգ Սիրո»:

Անհավատարմությունը

«Ուրեմն խտրություն չկա... ո՛չ արուի և ո՛չ էգի. որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս» (Գաղատ. 3.28):

Ամուսնական և ընտանեկան կյանքի երկրորդ գլխավոր ցավը համարվում է անհավատարմությունը: Այո՛, անհավատարմությունը հայ ընտանիքի հիմնական և գլխավոր խնդիրներից մեկն է, եթե ոչ ամենացավալին: Բոլորս էլ խոսում ենք անհավատարմության մասին որպես սովորական մի երևույթ, որ դարձել է շատ ընտանիքների կյանքի մի մասը: Մեր հասարակության մեջ անհավատարմությունը գլխավորապես վերագրվում է կին արարածին, իսկ այր մարդու անհավատարմությունն ընդհանրապես նկատվում է իբրև բնական երևույթ, նույնիսկ՝ իրավունք: Այս մտայնությունը հատկապես տարածված է տղամարդկանց շրջանակներում և անարդարացի ձևով պարտադրվում է ամբողջ հասարակությանը: Այսպիսով, հայ հասարակությունը ունի երկու չափ և երկու կշիռ: «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Գիրք Ծնն. 1.27) և օրհնելով նրանց՝ պարտականություններ դրեց նրանց վրա՝ առանց խտրականություն դնելու երկու արարածների միջև. «...ոչ թե երկու, այլ մեկ մարմին են» (Մատթ. 19.3-6),- ասում է Քրիստոսը: Իսկ Ս. Պողոս առաքյալն ասում է. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք. ուրեմն խտրություն չկա ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի... ո՛չ արուի և ո՛չ էգի, որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս

Հիսուս» (Գաղատ. 3.27-29): Ուստի անհավատարմության հանցանքը հավասար կերպով դատապարտում է երկու ամուսիններին՝ թե՛ տղամարդուն, թե՛ կնոջը:

Մեր դիտավորությունը, սակայն, մարդկանց դատապարտելը կամ դատելը չէ, այլ նրանց ուշադրությունը հրավիրելն է իրենց սխալների վրա, որոնք դարձել են բնականոն կենցաղ մեր հասարակության մեջ: Դժբախտաբար, այս սխալների իրական զոհերը մեր զավակներն են: Անհավատարմության մասին խոսելով՝ սիրուց մղված փնտրում ենք միջոցներ՝ վերականգնելու մեր հայ ընտանիքի վսեմությունն ու սրբությունը: Ինչպե՞ս գտնել անհավատարմության աղբյուրները և բուժել դրանք: Եկեղեցու դատական ատյանի մեջ երկար տարիների աշխատանքը և քահանայական առաքելության առատ փորձառությունը ականատես է դարձրել մեզ բազմաթիվ զույգերի ընտանեկան կյանքին և մասնակիցն ընտանիքների հաշտության և ամուսնական կյանքի վերականգնման աշխատանքային առաքելության:

Ուստի, ամուսնության թշնամիներին կարող ենք համառոտել հինգ կետերի մեջ, որոնք ընտանիքն առաջնորդում են բաժանման, ամուսնալուծության և անհավատարմության.

Ա. Ստիպողական ամուսնությունը՝ պայմանավորվածությամբ մեկ կամ երկու կողմերով, երբեմն դժբախտ արդյունքների է առաջնորդում: Ընտանեկան հարստությունների վրա հիմնված կամ պաշտոնական հանգամանքների ակնկալությամբ շահագրգռված ամուս-

նությունները նույնպես կարող են սպանել զույգերի կյանքի երազներն ու ապագան:

Բ. Ամուսինների ծնողների անտեղի միջամտությունները, որոնք պատճառ են ծնողական անզուսպ սիրո, որ խանգարումներ է ստեղծում նորաստեղծ ընտանիքում և պղտորում զույգերի համերաշխությունն ու փոխադարձ սերը:

Գ. Ամուսինների ընչաքաղցությունը և եսասիրությունը, որ խորապես մտահոգիչ պարագա է: Ընչաքաղցությունը հիվանդություն է, որ մտահոգիչ կացություն է ստեղծում զույգերի և նրանց ընտանիքիների մեջ, քանի որ ընչաքաղց մարդը զլանում է իր ամուսնական և ծնողական պարտականությունները կատարել: Իսկ եսասիրությունն ենթագիտակցական բարդույթ է, որի ենթական անկարող է դառնում ճշմարիտ սեր ապրել և նվիրվել ընտանեկան ամբողջական պարտականություններին:

Դ. Ամուսինների արտաքին անխոհեմ կապերը, բարեկամական, գործնական կամ ընկերային հարաբերությունները, որոնք ամուսինների միջև ստեղծում են սառնություն, հեռավորություն, անտարբերություն ու անհետաքրքրություն իրար նկատմամբ՝ մինչև անգամ հասցնելով դավաճանության, փախուստի և բաժանումի:

Ե. Անհիմն և երևակայական իդեալները, ինչպես օրինակ զավակների կրթության համար ամուսինների անտեղի վեճերը, հատկապես, եթե խառն ամուսնություն է:

Այս հինգ կետերը ոտնակոխում են և մոռացության մատնում ամուսնական զույգի սրբազնագույն պահը՝ Աստծո և իրար հանդեպ հավատարմության ուխտը

Ս. Խորանի դիմաց: Այս հինգ կետերը և նրանցից բխող հետևանքները պղտորում են ընտանեկան մթնոլորտը և խաթարում կյանքի բնականոն ընթացքը: Սակայն վատագույնն այն է, որ այս ամենը բանդում է երեխաների հոգեբանությունը, ապագա երիտասարդի խնդիրների համար հիմք ձևավորում: Զավակներին մեծացնում են՝ անկարող լինելով նրանց ապագան որոշելու, անգամ վրեժխնդիր նկարագիր ձևավորում նրանց հոգու մեջ:

Այս բոլոր ասվածներից հետո չի կարելի փակել ընտանեկան հարցերն ու վտանգները, որ սպառնում են ընտանիքին: Այս ամենին առավել՝ մեր դիմաց ունենք ամուսնալուծությունը:

Ամուսնալուծությունը (ապահարզանը[1])

«...Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. 19.6):

Նախորդ էջերում նշել էինք ապահարզանի (ամուսնալուծության) մասին՝ որպես արդյունք ամուսնական անհավատարմության: Սակայն իրականության մեջ ամուսնալուծության դիմողները միայն վերոհիշյալ ախտի համար չէ, որ ամուսնալուծվում են: Հաճախ ամուսնալուծվողներն եսասիրությամբ տառապող անձեր են: Նրանք, հաղորդակցության միջոցների զոհ լինելուց բացի, զոհ են նաև պետությունների ու նրանց կառավարությունների՝ ընտանիքի հանդեպ ունեցած անհոգության: Այս անհոգությունը ծանրապես ազդում է ընտանիքի կայունության վրա և խախտում է նույնիսկ այն հավատացյալ զույգերի ամուսնական հարաբերությունները, ովքեր կամովին կապել են իրենց կյանքը Ս. Պսակի անքակտելի Խորհրդով:

Ամուսնալուծությունը նաև արդյունք է այն պարագաների, երբ ամուսիններն իրենց անձնական քմահաճույքը, կամքը և ցանկությունները վեր են դասում ընտանիքի շահերից: Բացակայում է անձնվիրումը, զոհողությունը և իրական սերը ընտանիքի նկատմամբ: Նրանք մտա-

1 Հովվական թղթիս մեջ ամուսնալուծություն բառը ապահարզանի փոխարեն եմ գործածել՝ բաժանումի իմաստը բացատրելու համար: Ամուսնալուծությունը օտար լեզուների մոտ նշանակում է «annulment, annullamento, annulation», այսինքն՝ չեղյալ: Այս ամուսնալուծությունն ուսումնասիրվում և տարվում է միայն եկեղեցական ատյանից: Իսկ ապահարզանը համապատասխանում է «Divorce»-ին: Այս վերջինը եկեղեցին չի ընդունում՝ արտոնելու համար երկրորդ ամուսնություն, մինչ առաջինի մի քանի պարագաներում եկեղեցին արտոնում է:

հոգված չեն ամուսնալուծությունից հետո պատահելիք ավերներով, մանավանդ, զավակներին սպառնացող հոգեբանական դժբախտ խնդիրներով: Սակայն Եկեղեցին, ի հեռուկս այս ամենի, որոշ երկրներում և, մանավանդ, մեր հայ հասարակության մեջ առաջացած և շատացած ամուսնալուծությունները նկատում է որպես հասարակական «ցավալի վերք»[2], որի պատճառով հատուկ կերպով շարունակում է իր Մայրական հոգածությունը ընտանիքի հանդեպ: Ամուսնալուծությունը մարդկության ցավ է, մանավանդ նրանց համար, ովքեր տեսնում են իրենց ամուսնական վսեմ երազների կորուստը: Եկեղեցին զգայուն է իր զավակների հանդեպ և հետամուտ է Ս. Պողոսի խոսքին՝ «Ուրախացողների հետ ուրախանալ. լացողների հետ լալ» (Հռոմ. 12.15):

2 Cf. Gaudium et spes, n. 47

Աղքատությունը

«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5.3):

Անտարակույս, աղքատությունը, մեղմ ասած, անախորժ վիճակ է մարդու կյանքում, առավել ևս, եթե նյութական աղքատությունն ընտանեկան կյանքում է: Թող ինքնախաբեություն չդիտվի, եթե նկատի առնենք Ս. Ավետարանի մեջ բազմաթիվ անգամներ նշված ամոթիչ տողերն աղքատության վերաբերյալ, մանավանդ, «Երանիների» մեջ՝ «Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5.3): Այո՛, տհաճ է աղքատությունը, սակայն արժանանալու են Քրիստոսի տված երանությանը, եթե կարողանան համբերությամբ և սիրով այն տանել: Այն շատ տարաձայնություններ է առաջ բերում ընտանիքում, հատկապես այն դեպքում, երբ զավակների ապագան ապահովված չէ: Հասարակությունում աղքատություն ապրողը վերածվում է ստորադաս և անկարևոր դասակարգի ներկայացուցչի՝ անկախ իր հոգևոր և կրթական պատրաստվածությունից: Բարոյական արժեքներն անիմաստ և անկարևոր են դառնում աղքատի կյանքը փոխելու համար: Մեկ խոսքով՝ լքված և անտեսված է մնում աղքատ անհատը և ընտանիքը: Սարսափելին այն է, որ աղքատը լքված է անգամ մի շարք հոգևորականներից: Աղքատությունը դաժան երևույթ է, բայց ավելի դաժան է հասարակության վերաբերմունքն աղքատի հանդեպ: Այս բոլորը նկատի առնելով հանդերձ, եթե հոգով զորավոր և ճշմարիտ սեր կա ամուսինների

ու զավակների միջև, նյութական պակասը չի բանդում ամուսնությունը և ոչ էլ ընտանիքը, այլ, ընդհակառակը, ձգտումի աղբյուր է դառնում ընտանիքի միասնության և համագործակցության համար, որոնք առաջնորդում են իրենց կյանքի հաջողությունների նվաճմանը:

Վիժում կամ արհեստական վիժում

«Մի՛ սպանիր» (Ելք 20.13):

Այս երկու արտահայտություններն էլ միևնույն ողբերգական որդեսպանությանն են առաջնորդում: Երկու բառերն էլ անմեղ ու անզեն մարդ արարածի սպանության ֆստմնելի արարքի դիմաց են մեզ դնում: Երկու արտահայտություններն էլ մարդկային իրավունքի դեմ են մեղանչում. չեմ ասում, թե որքանո՛վ Աստծո դեմ է այս ոճիրը: Չեմ ուզում նշել, որ գլխավոր զոհը մայրն է, և չեմ ասում՝ որքա՛ն պիտի չարչարվի վիժող մայրն իր կյանքի ընթացքում: Չեմ ուզում հիշեցնել, որ ամուսնության հիմնական և գլխավոր նպատակը որդեծնությունն է: Աղջիկը մայր դառնալու ցանկությամբ է ամուսնանում: Ինչպե՞ս կարելի է բացատրել կամ արդարացնել նման ոճիրը: Որքանո՞վ կարելի է հասկանալ մոր հոգեբանությունը և դրդապատճառները, որոնք իրեն մղում են ինքնակամ տրամադրվել անզեն զավակին սպանելու գործողությանը: Անգիտակից անասուններն անգամ չեն գործում նման ոճիր: Ի՛նչ դավաճանություն զավակի դեմ, ընտանիքի դեմ, ինքն իր դեմ և ի՛նչ դավաճանություն մարդու կյանքի իրավունքի դեմ և կյանք պարգևող Աստծո դեմ:

Ժամանակին՝ փոքր հասակում, կարդում էինք մոր սրտին նվիրված մի պատմություն, որի մեջ զավակը, խարվելով թշնամուց և շլանալով շռայլ խոստումներից, գալիս սպանում է մորը և նրա սիրտը տանում է թշնամուն: Շտապողականության մեջ զավակը սայթաքում

և վայր է ընկնում: Մոր սիրտն այլայլված կանչում է. «Վա՜յ, զավա՛կս, զգո՛ւյշ, չվիրավորվես»:

Այսօր մայրերի սիրտը կարծես այլափոխվել է: Ի հեռուկս սրբակյաց մայրերի, ովքեր, լռության մեջ իրենց խաչը շալակած, սերունդներ են դաստիարակում և մեծացնում, կան մայրեր և, ի ցավ սրտի, շատ կան, ովքեր ինքնակամ և նախածրագրված իրենց արգանդի մեջ ապահովություն գտած անպաշտպան զավակներին սպանում են վիժումով: Ի՜նչ անողորմ արարք: Երկու կաթիլ արցունք են թափում և ապա իրենց կյանքի բնականոն ընթացքին վերադառնում՝ անզգամ և անտարբեր, կարծես ոչինչ էլ չի եղել: Այսօրվա կանայք մեկ արհեստական վիժումով չեն սահմանափակվում, չեն գոհանում, այլ կրկին ու կրկին վիժումների են ենթարկվում՝ իրենց մարմինները վերածելով սպանդանոցի: Ահավո՛ր աղետ է: Մինչ այս վերլուծումն ենք կատարում, մեր աչքի առջև ունենք մեր ազգի հարազատ մայրերին, որոնց ուզում եմ գգվել և սիրով ասել. «Սիրի՛ր և մի՛ սպանիր»: Ուզում եմ մեր հայ երիտասարդ մայրերին հանդիպել և սիրով նրանց ասել, որ կան համաշխարհային ուժեր, կան գերագույն ուժեր և անգամ հզոր ատոմական ուժեր, որոնք, սակայն, ոչինչ են հավատացյալ, Աստծո հավատարիմ ընտանիքի ուժի դիմաց: Եվ դու, հա՛յ աղջիկ, քո ուժը մայրության և ընտանիքի մեջ է: Դրա համար էլ չեմ ուզում ավելի հեռուն գնալ և պատմել, թե ինչ երկրներ և ինչ պետություններ են աշխատում վիժումը մարդու իրավունք դարձնելու համար: Չեմ ուզում խոսել նրանց մասին,

ովքեր աշխատում են մարդկության գերագույն և կենտրոնական ուժը՝ ընտանիքը, բանդել: Եկեղեցին գիտակից է սատանայական այս ուժերի գոյությանը, սակայն մնում է անխախտ և հաստատ իր աստվածային ակունքներում և դրանց վրա հիմնված՝ շարունակում է պայքարել մարդու իրավունքները հարգելու և պահպանելու համար: Հիշատակության է արժանի Միացյալ Ազգերի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին հռչակված «Մարդու իրավունքներ» հրատարակությունը, որի հռչակման հիսնամյակի տոնակատարությունների առթիվ մարդու իրավունքների տիեզերական հայտարարությունն արժեքավորում է «Ընտանիքը որպես հասարակության բնական և հիմնական կորիզ»:

Խրատ ծնողներին

«Ով խրատ է սիրում, նա իմաստություն է սիրում...» (Առակներ 12.1):

Եթե «Մարդու իրավունքների» տիեզերական հայտարարությունն ընդունում է ընտանիքը որպես կորիզ մարդկային հասարակության, եթե գիտական աշխարհն էլ ընդունում է ընտանիքը որպես առաջին դպրոց կյանքի գիտության, եթե եկեղեցին այն անվանում է տնային եկեղեցի, եթե հասարակագետներն ընտանիքը նկատում են որպես լավագույն բնական օրրան զավակների բնական աճի համար, եթե հոգեբաններն անգամ նկատում են ընտանիքն իդեալական վայր՝ հաղթահարելու բարդույթները և հոգեկան տագնապները, ինչու՞ մենք՝ հայ քրիստոնյա ժողովուրդս, պիտի լքենք մեր սրբազան ավանդությունները, ինչու՞ պիտի մոռանանք Աստծո պատվիրաններն ու խնդրանքները: Ինչո՞ւ Աստծո օրը սուրբ պիտի չպահենք և այլն, ինչու՞ պիտի չապրենք Նրա սուրբ պատվիրանները, այլ, փոխարենը, փողոց ընկած հավաքենք և ընդօրինակենք օտար երկրների վատ ու ժխտական սովորույթները:

Օտար ափերում մեր զավակները, խառնվելով օտար մշակույթների հետ, հաճախ վարակվում են օտարոտի սովորություններով և վերադառնալով իրենց տոհմային ծննդավայրը՝ օտարացած անջատվում են իրենց միջավայրից՝ ապրելու օտար սովորություններով, մտայնությամբ, որ չի համապատասխանում իրենց ինքնությանը և ազգային մշակույթին: Այս պատճառով սրտաբուխ աղաչանք

ունեմ Ձեզ, հայրե՛ր, որ պարտականություն ունեք պաշտպանելու ձեր ընտանիքն ամեն վտանգից: Այր մարդը, լինելով ընտանիքի և իր կնոջ գլուխը, պարտականություն ունի սիրելու, ուղղելու, կրթելու և առաջնորդելու իր ընտանիքը դեպի լույսի կենարար աղբյուրը: Հայրե՛ր, պատասխանատվություն ունեք Աստծո և հասարակության դիմաց՝ առողջ հոգով և մարմնով, զորավոր կամքով և հաստատուն քրիստոնեական բարոյականությամբ, ապագայի արդարամիտ և հավասարակշիռ անձնավորություններ դաստիարակելու: Իսկ դո՛ւք, մայրեր, ձեր պարտականությունը շատ ավելի ծանր ու պատասխանատու է: Հղիությունից սկսած մինչև ծննդաբերություն, մանկություն, երիտասարդություն և հասուն տարիք դուք եք ձեր զավակներին ձևավորողը և կերտողը: Ձեր սնած և պահած զավակները ձեզանից վերցնում են գուրգուրանքն ու սերը, հոգևորն ու բարոյականությունը, դաստիարակությունն ու գիտությունը, որոնք էլ իրենց հերթին նույնը փոխանցելու են հաջորդ սերունդներին: «Պարոնե՛ր, եթե դուք ցանկանում եք կրթված զավակներ ունենալ, դրա համար հարկավոր է կրթված մայրեր պատրաստել... Կրթությունը նախ ստացվում է ընտանիքից, իսկ ապա՝ դպրոցից: Կրթված մայրն օրորոցում պետք է նախապատրաստի իր երեխային»,- այսպես էր մտածում հայ մեծանուն գրող Ռաֆֆին: Ձեր դերը, սիրելի՛ մայրեր, չի սպառվում միայն դժվարությունների առջև պատնեշ լինելով, այլ ձեր կյանքը սուրբ առաքելության վերածելն է՝ ի սեր ձեր զավակների: Ինչպես Մարիամը՝

Աստվածամայրը, խնամեց մանուկ Աստվածորդուն, նույնպես և դուք, սիրելի՛ հայ մայրեր, ձեր զոհողությամբ և անձնվիրումով կյանք, ուրախություն և ապահովություն եք տալիս ձեր ընտանիքներին և զավակներին: Չկա իշխանություն թե թագավոր, հարուստ թե աղքատ, ալևոր թե երիտասարդ, որ չխոնարհվի ու չհուզվի Մոր անվան առաջ: Մեր հայ մեծանուն բանաստեղծներից չկա մեկը, որ իր տողերում գովերգած ու փառաբանած չլինի Մորը: Մեկ գրությունը չի բավականացնի հիշատակելու նրանց բոլորի գործերը: Մեջբերենք ամենահոգեպարար մոր մասին բանաստեղծություններից մեկը[1]:

Մայրս

Մեր հույսի դուռն է մայրս, Մեր տան մատուռն է
մայրս, Մեր օրորոցն է մայրս,
Մեր տան ամրոցն է մայրս, Մեր հերն ու մերն է
մայրս, Մեր ճորտն ու տերն է մայրս,
Մեր տան անտունն է մայրս, Մեր արծվաբունն է
մայրս, Մեր տան ծառան է մայրս,
Մեր տան արքան է մայրս, Մեր տան անճարն է մայրս,
Մեր դեղ ու ճարն է մայրս,
Մեր տան աղբյուրն է մայրս, Մեր ծարավ բույրն է
մայրս, Մեր տան անբունն է մայրս,
Մեր անուշ բունն է մայրս, Մեր տան ճրագն է մայրս,
Մեր արեգակն է մայրս:
Մայրս, մեր հացն է մայրս,
Մեր տան աստվածն է մայրս:

1 Հովհաննես Շիրազ, «Մայրս»

Չենք ուզում դատել կամ դատապարտել որևէ մեկին կյանքի ընթացքում գործած սխալների կամ մեղքերի համար. բոլորս էլ մեղանչական ենք, ամենքս էլ կարիք ունենք Աստծո օրհնության ու մեր մեղքերի քավության և թողության: Սակայն ուզում ենք ձեր մեջ տեսնել վերականգնվելու ցանկությունն ու բաց երկնքի անհունության մեջ սլանալու քաջությունն ու հաստատ կամքը: Տեսել եմ, թե ինչպես ճայերը, դեռ չթռած, նախ իրենց թևերն են մարզում գետնի վրա և ապա նոր իրենց ծնողների հետ թռչում են դեպի երկնքի անսահման տարածքները: Մենք էլ ճայերի նման մարզենք մեր հոգևոր թևերը՝ սլանալու սրբության երկնային ճանապարհներով մեր հարազատների հետ, ովքեր մեզ տվեցին կյանք և բարոյականություն, ում շնորհիվ մենք ամբարեցինք հոգևոր պաշարները մեր կյանքի ընթացքում:

Այն օրը, որ ընտանեկան կյանքը ընտրեցիք, դրական պատասխան տվեցիք Աստծուն, ստացաք Ձեր ծնողական հատուկ կոչումը, որ Աստծո պարգևն է և մեծ պատասխանատվություն է: Դրա համար էլ Աստվածաշնչի Առակների գիրքը խրատում է զավակին. «Որդյա՛կ, պահի՛ր հորդ օրենքը և մի՛ մերժիր մորդ խրատը: Ընդունի՛ր դրանք հոգուդ մեջ, մշտապես պահի՛ր քո գլխում և իբրև մանյակ, գցի՛ր քո պարանոցին» (Առակաց 6.20-21). այս է ծնողական պատասխանատվության մեծ կոչումն ու պատիվը:

Հայրե՛ր, ինչպես Ս. Պողոսն եփեսացիներին ուղղված իր նամակում հորդորում է հայրերին (Եփես. 6.4), նույնպես մենք ուզում ենք նույն խրատը հիշեցնել: Հայրությունն

իշխանության և հրամայական լինելու մեջ չի կայանում միայն և ոչ էլ խստության, զայրույթի և անհավասարակշիռ հրամանների մեջ: Հայրությունը զոհողության, ներողամտության և նվիրումի մեջ է, ինչպես Ս. Պողոսն է ասում. «Այրե՛ր, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց իր եկեղեցին և իր անձը զոհեց նրա համար...» (Եփես. 5.25): Այո՛, Քրիստոսն իր անձը նվիրեց Եկեղեցուն՝ իր կյանքը զոհելով խաչի վրա: Հավատարիմ մնաց Եկեղեցուն, փրկեց իր Սուրբ Արյամբ և խնամում ու պահում է իր Սուրբ Մարմնով. «Որ արեամբդ քո զմեզ ստացար, եւ մարմնովդ կերակրես»,- այսպես ենք աղոթում Սուրբ Հաղորդության Երկրպագության ժամանակ[2]: Դուք էլ, 21-րդ դարի հայրե՛ր, հավատարմությամբ շարունակեք այն, ինչ որ մեզ ավանդվեց Ս. Գրքի միջոցով, մեր Ս. Հայրերից և ազգային ու մշակութային ավանդություններից:

Հայրե՛ր, Ձեր կոչումը սուրբ և ազնիվ է, հարուստ և պատվավոր՝ սրբագործված Սուրբ Պսակի խորհրդով: Այն Աստծո և միմյանց հետ կնքված դաշինք է՝ ապրելու, հավատարմությամբ առաջնորդելու և պաշտպանելու Ձեզ հանձնված ընտանիքը՝ ի հեճուկս ամեն դժվարության՝ որպես օրինակ ունենալով Սուրբ Հովսեփ աստվածահորը, որ այս աշխարհի մեջ խոնարհությամբ, սրբությամբ և սիրով կատարեց իր հայրական վեհ կոչումը:

---

2 Մաշտոց, Վիեննա,1880, էջ 503, «Կանոն օրհնութեան Կենարար Խորհրդով Ս. Հաղորդութեան»:

Զոն Ս. Ընտանիքին և մաղթանք վասն հայ ընտանիքի

Ալեկոծ կյանքի ընտանեկան հանգամանքները քննելուց և նրա կոչումը ճանաչելուց հետո տեսանք նրա վսեմությունը, տեսանք նրա զորությունը, անհաղթ ու ազնիվ նկարագիրը՝ ի հեռուկս ընտանեկան կյանքի բոլոր դժվարությունների և տկարությունների:

Այս հոգեկան ապրումներով, ինքնակամ և ինքնավստահ բայլերով մոտենում եմ Քեզ, ո՛վ Սուրբ Կույս Մարիամ Աստվածամայր, որ Միածին Որդուդ խաչի կողքին դարձար Մայր համայն մարդկության: Մոտենում եմ Քեզ՝ խոնարհությամբ հանձնելու մեր հայ ազգի բոլոր մայրերին և մայրության պատրաստվող սրբորեն բեղուն աղջիկներին: Թող հովանուդ և պաշտպանությանդ շուքի տակ զրահվեն առաքինությամբ, հարստանան աստվածային առատ շնորհներով, զարդարվեն վսեմ ու բարձր բարոյական արժեքներով:

Իսկ Դու, ո՛վ Սուրբ Հովսեփ, պաշտպան կարոտյալների և առաջնորդ կորուսյալների, Քեզ եմ հանձնում մեր հայ ազգի ընտանիքի հայրերին: Թող որ մեր Հայ հայրերը տպավորվեն Քո համեստությամբ, խոնարհությամբ և հավատարմությամբ պայքարեն՝ իրենց ընտանիքները պահելու, պաշտպանելու և ճշմարիտ ճամփի վրա դնելու համար: Աստվածահոր Քո կոչումով դրոշմի՛ր մեր հայ ազգի հայրերին: Ի սպաս իրենց ընտանիքների՝ թրծի՛ր նրանց հոգևոր կյանքով ու հավատարմությամբ՝ նրանց տիպար օրինակ դարձնելով իրենց զավակների համար:

Վերջապես մեր համայն ազգի զավակներին հանձնում եմ Քեզ, ո՛վ Հիսուս, որ կերտես ու զարգացնես նրանց սրտի մեջ աստվածասիրությունը, անկեղծությունը, արդարամտությունը և բաջությունը՝ վկայելու իրենց պատկանելիության բրիստոնեավայել կյանքով:

Այս թող լինի սիրով խարսխված Ս. Ընտանիքի պաշտպանության իմ աղոթքը:

06.02.2014

Համառոտ տեսություն

2014 թվականն Ընտանիքի նվիրված տարի է: Այս առիթով, մինչ համայն աշխարհը տոնում է Քրիստոսի ծննդյան օրերը, մենք ևս, որպես Հայ Կաթողիկե եկեղեցի, Ս. Ծննդյան տոնի առթիվ Հիսուսի Ս. Ընտանիքն ենք վերցնում որպես ընտանիքի տիպար՝ ապրելու նրա օրինակով: Ս. Գրքում կարդում ենք, որ Աստված, իր անհուն սիրուց մղված, ցանկացավ ստեղծել մարդուն, որովհետև ստեղծագործության բոլոր էակները լավ էին ու սիրելի, հետևաբար, վեցերորդ օրն ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ... Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով. Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Գրք. Ծնն. 1.26-27): Այսպիսով, մարդը դարձավ մասնակից աստվածային կյանքին:

Մեր մաղթանքն է՝ ինչպես միասին աշխատեցինք՝ բնելու և խորացնելու մեր քրիստոնեական հավատքը 2013թ.-ին, այդպես էլ այս տարի՝ 2014թ.-ին, միասին պետք է ապրենք ընտանիքի բարոյական արժեքները:

Մինչ աշխարհն իր կործանարար ազդեցությամբ ու դերակատարությամբ ջանում է շարունակաբար քայքայել ընտանիքի հիմքերը, մենք՝ Հայ Եկեղեցու զավակներս, պետք է լրջորեն գործենք՝ հասկանալու ընտանիքի իմաստը, նրա հատուկ աստվածային կոչումը, իրավունքները, պարտականությունները և, հատկապես, Քրիստոնեական բարոյական արժեքներն ու ապրումները:

Առանձնաշնորհյալ հատուկ Կոչում է ընտանեկան կյանքը, ինչպես եղավ Մարիամի դեպքում՝ Գաբրիել

հրեշտակի ավետումով. «...Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, բանզի Աստծուց դու շնորհ գտար: Եվ ահա, դու կհղիանաս և կծնես մի Որդի ու նրա անունը Հիսուս կդնես...» (Ղուկ. 1.30-31): «Հովսե՛փ, Դավթի՛ որդի, մի՛ վախեցիր բեզ մոտ առնել Մարիամին՝ բո կնոջը, որովհետև նրա մեջ Ծնվածը Սուրբ Հոգուց է: Նա մի Որդի պիտի ծնի, և նրա անունը Հիսուս պիտի դնես, բանի որ նա պիտի փրկի իր ժողովրդին իր մեղբերից» (Մատթ. 1.20-21):

Իրավունք է տեր դառնալ ընտանիքին, ինչպես «Հովսեփն էլ, Դավթի տնից և ազգատոհմից լինելով, Գալիլիայի Նազարեթ բաղաբից ելավ գնաց դեպի Հրեաստան՝ Դավթի բաղաբը, որը Բեթղեհեմ է կոչվում, մարդահամարի մեջ արձանագրվելու Մարիամի հետ, որ նրա հետ նշանված էր և հղի էր» (Ղուկ. 2.4-5):

Պարտականություն է պահել ու պաշտպանել ընտանիքը, ինչպես Հովսեփն ու Մարիամը Հիսուս մանուկին պաշտպանեցին՝ փախցնելով Նրան Եգիպտոս: Մեր պարտականությունն է այսօր էլ պաշտպանել մեր ընտանիքները աշխարհի հազար ու մեկ ախտերից: Իրավունք է վայելել ընտանեկան բաղցրությունը, սերն ու գուրգուրանքը, ինչպես Ս. Ընտանիքն էր ապրում Նազարեթի մեջ. «Իսկ Հիսուս զարգանում էր իմաստությամբ, հասակով ու շնորհով Աստծո և մարդկանց առջև» (Ղուկ. 2.52): Պարտականություն է նրան հավատարիմ մնալը:

Ահավասիկ, Սուրբ Օջախի նկարագիրն ընդգծող մի ուղեցույց, որի առաջնորդությամբ հրավիրված ենք ապրելու ընտանիքին նվիրված 2014 տարին: